


Ձեռագիրք Ձեն Վերադարձուիր
— Բաժանորդ ազգու թիւնք —
Ամէն երկրաց համար
ԵՐԿՈՒ ՏՕԼԱՐ ԿԱՆԽԻԿ



HAIK
ARMENIAN POLITICAL, AND
HYGIENIC FORTNIGHTLY.—
EDITED BY
M. S. GABRIEL, M. D.
202 W. 23d Street, New York, U. S. A.
To whom all communications must be
addressed.
Terms for all Countries.
One Year - - - - \$ 2.00.

ԿԻՍՆԱՄԱՆԵՆՆԵՐ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ. ԵՒ ԱՌՈՂՋԱԲԱՆԱԿԱՆ

Editor—*M. S. GABRIEL, M D.*

Տէր-Խմբագիր.—Մ . Ս . ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

202 W. 23rd St., New York City, U. S. America.

ԱՆՏԻՔՍԻՆ

ኒኮኮ ቴዐዮቶ

УУЗТУ 15 1891

ፆ፡፲፡፲ 10

Entered as second-class mail matter. at P. O. New York.

ԲՈՒՆԵԴԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Արեւաբոսոս-Ռէն Տր՝ Գաբրէէլէանի է Հանդիսի
Հինգերորդ Տարեդարնի Հայեական Սիւն-Ռեան Ամբիկայ
— Նասան Կ. Պօլէն. — Նասան Կիլիկիայէն. — Նասան
Կիլիկիայէն. — Սաւան Հասիս իւ զԲօսնոս. — Նասան
Կ. Պօլոս, Հայեհասարական Յաննիսիէն — Հայ
Հայեհասարական Յաննիսիոսիէն է Նի- Եօրթ. — Ծրա
Գաղլիայէն Կաղմակերպոս-Ռեան — Պարսէն Շրջաբե
րական Նասանիէն. — Հայ Երեւանսարդայ Փէրիտ— Աշ
Է Այդ:

U. S. E. U. W. O. U. N. R. R. R. R. R.

ፆ ሥ. ጥሁ ሶ ሶ ኑ ሊ ሄ ህ ኑ ሶ

Ի ՀԱՆԴԻՍԻ ՀԻՆԳԵՐՈՂ ՏԱՐԵԴԱՐՁԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՅԱՄԵՐԻԿԱ

Ի 25 Ապրիլ 1891

(Այն երկարատեւ և բուռն ծափահարութեամբք որով գոռացուցին սրահն յաւարտ ասենախօսութեան, կը ցուցնէին մեր հայրենակիցք թէ խիստ քննադատութիւնն եւս, եթէ սիրաշունչ է, սիրով կ'ընդունին, և թէ ազգային պարծանաց վերայ կամ օտար թշնամեաց դէմ արտասանուած խօսքերն չեն միայն որ մեր ժողովրդեան սրտին կը թափանցեն):

Տիար ատենապետ, Ազնիւ Տիկնայք և Տեարք,

Հայկ. Միութեան Հինգերորդ տարեդարձն կը տօնեմք այս երեկոյ ուրախութեամբ մի նման այնր, գործնողք կը զգան իրենց զաւակի Հինգերորդ տարեդարձի առթիւ: Տղան ծնիլ դժո ար է, զայն Հինգ տարեկան ընել չատ աւելի դժուար է: Վիճակագրութիւնք կը ցուցնեն թէ 100 մանկանց 71ն միայն Հինգ տարեկան հասակի կը հասնին ի Ֆռանսա, 64ն միայն՝ յԱւստրիա, 61ն միայն՝ յԻտալիա:

Եթէ յիսուհ տարիէ ի վեր Հայ ազգին մէջ կազմուած զանազան ընկերութեանց տեղեկադրութիւնն չիսուած լինէր, կարծեմ պիտի տեսնուէր թէ անոնց հարիւրին երեքն կամ չորսն հազիւ հինգ տարեկան եղած են :

Հայ ընկերութեանց այս տարածափեղի մահաՀամարն
ըստ մասին կը բացատրուի այնու զի ընկերութիւն կազ-
մել մեր մէջ նորաձեւութիւն եղած է, և բազումք ընկե-
րութիւն կազմած են լոկ որպէս զի ընկերութիւն կազ-
մած իննն :

Կայ սակայն աւելի ընդհանուր պատճառ մի ընկե-
րութեանց սակաւակեցութեան ամէն ազգի և երկրի մէջ։
Ամէն տեսակ գործարանաւորութիւն բուսական, կենդա-
նական կամ ընկերական, իւր դեռահաս հասակի մէջ փա-
փուկ է և դիւրաւ կը վերաւորի, կը հիւանդանայ և կը
մեռնի։ Ամէն ծաղիկ պտուղ չլինիր․ ամէն հաւկիթէ հաւ
չեներ․ ամէն երտխայ մարդ չափահաս չլինիր․ և ոչ ա-
մէն սկսուած ընկերութիւն կ'ապրի։ Նորակազմ ընկերու-
թիւնք ալ դեռահաս մանկանց նման նշաւակ են տեսակ
տեսակ ջերմերու և ցնցումներու, որք յաճախ մահաբեր
կը յինին։

Կը գտնուին անշուշտ քաջառողջ մանուկներ, որք
գրեթէ երբէք չեն հիւանդանար, քաջառողջ ընկերու-
թիւններ ալ կան, թէեւ հազուադիւս: Կը խոստովա-
նիմք թէ Հայկական Միութիւնն բաւական հիւանդոս
մանկութիւն մ'ունեցած է: Այս երեկոյ չեմք պարծի-
րանոր անցեալ հիւանդութեանց վերայ, այլ կ'ուրախա-
նամք որ բժշկուած է միշտ, և այնքան աւելի կ'ուրա-
խանամք որքան զօռար եղած է մեզ այդ հիւանդու-
թիւններէն բժշկել մեր սիրեցեալ Միութիւնն:

Բայց թէեւ հիւանդոտ եղած է Միութիւնս, եղած
չէ անօգուտ : Ընդհակառակն, գնահատելի բազմադիմի
օգտակարութիւն մ'ունեցած է այն :

Որովհետեւ «Հայք»ի մէջ այս ընկերութեան գործերն պատմած եմ բաւական մանրամասնօրէն, աւելորդ կը համարիմ աստ կրկնել այն ամէնն . թերթիս հրդեհը թիւերէն կրնաք տեսնել թէ Հայկ . Միութիւնն վառարան մ'եղած է Հայերէն Լեզուի և ազգային զգացմանց ի նիւ Եօրք, օգնած է ազգաստին, գործ գտած է անգործին այցելած է հիւանդին, յուղարծած է մեռեալն, օթանդակած է հրկիզեալ Զէյթունի շինութեան, Ս . փրկչի Աղդ . Հիւանդանոցի վերաշինութեան և Ուսթըրի Հայկ . Եկեղեցւոյ կառուցման :

Ես աւելի կը բաղձամ այս ընկերութեան հիւանդութեանց վերայ խօսիլ այժմ քան թէ նորա գործոց վերայ: Զայս կ'ընեմ վասն զի Հայկ. Միութեան ախտա-

բանութիւնն բուն Հայ ազգին անտարանութիւնն է. և անոր բուժարանութիւնն եւս Հայ ցեղին բուժարանութիւնն :

Տաճկաստանի ամէն գաւառէն և ամէն քրիստոնէական յարանուանութենէ անդամ ունի այս ընկերութիւնն, ինչպէս նաև ընկերական և կրթական յոյժ տարբեր կարգերու պատկանող անդամներ :

Կրնանք նշելայ բացատրութեամբ կոչել Հայկ. Միութիւնն ի չհամազգեսաց լծեալ կառք զարմանալիք : Եւ ինքնին կերելի թէ այսպիսի կառք մի կառավարել որքան դժուարին է : Զայս ի փորձոյ գիտեմ ես ինքնա : Մեր ընկերութեանց մէջ շատ անգամ աւելորդ ժամանակ կը վատնուի և կոխներ կը ծագին անտի դիմեք Հայքս կարգապահութեան (discipline) վարժուած չեմք : Չեմ ըսեր թէ ընկերութիւն կազմելու և կանոնաւոր նիստեր ընելու սովորած չեմք, վասն զի այդպէս ըսել պիտի լինէր ճշմարտութեան փոքր մասն ըսել : Մեք ոչ մէկ բանի մէջ կարգապահութիւն գիտեմք : Եւ ի՞նչ է կարգապահութիւն :—Կազմակերպեալ մարմին մի, թէ դպրոց լինի, թէ ընկերութիւն, թէ բանակ, իր կարգու կանոն ունի, այդ կարգաց և կանոնաց համեմատ անդամոց շարժիլն է կարգապահութիւն : Արդ, ցաւալի է ըսել թէ մեր ազգին մէջ կարգապահ լինելու կարողութիւնն շատ տկարացած է : Երկար դարերէ ի վեր Թրքին հպատակ և դերի լինելով, Հայքս վախով կառավարուած եմք, օտարի և թշնամույ օրինաց հնազանդած եմք յաճե ոչ թէ ի սիրոյ օրինաց : Ըստ Մօնթէսքիէօի, քաղաքային առաքինութիւնն է քաղաքացւոյն սէրն և յարգանքն երկրին օրինաց համար : Մեք Հայքս, այլակրօն և բռնաւոր տէրութեան ներքե գտնուելով՝ այդ քաղաքային առաքինութենէն զրկուած եմք : Սիրով և յարգանք հնազանդիլ չգիտեմք, մանաւանդ Տաճկաստանի Հայքս օտարին միայն բիրտ, շօշափելի դօրութեան առջեւ խոնարհիլ գիտեմք : Եթէ աստեալեան զմեզ ի կարգ հրաւիրէ, կը վիրաւորուի : Որքան ալ վիրաւորիչ լինին մեր բացատրութիւնք, որքան ալ չանչանաբանեմք, կ'ուզեմք որ աստեալեան դէմ չենք, եթէ ենք, անպատուութիւն կը համարուի մեր անձին, թէ եւ Մեծն Կլատտիքն ինքն անցեալ օր Բաւլամէնթին մէջ ի կարգ հրաւիրուեցաւ : Կարծե՞ք թէ բարկացաւ նա :

Չենք անոնք որք ընկերութեանս մանկութիւնն լաւ կը ճանաչեն, կը մտածեն թէ անոր հիւանդութեանց մեծագոյն պատճառն դեռ չյիշեցի, և թէ անպատշաճ պիտի համարուի յիշել զայն : Բայց պիտի յիշեմ, վասն զի մեր ընկերութեան և մեր ազգին հիւանդութեանց գլխաւոր պատճառն է այն : Ժամանակաւ, ասկէ 30—40 տարի առաջ, Հ. Ղեւոնդ Ալիշան յաճախ կը գրէր այս իս դրոյ վերայ «Բազմավիպ»ի մէջ : Հ. Ինճիճեան Հայաստանեայց Հնախօսութեան Բ. հատորին մէջ ընդարձակօրէն խօսած է նոյն խնդրոյ վերայ : Այժմու ինձ ծանօթ ազգային թերթերու մէջ միայն մէկ հաստ կայ որ այս մահու և կենաց խնդրոյ վերայ ստէպ կը գրէ համարձակ լեզուաւ և ազնիւ ոգով, այն է «ՄՇԱԿ»ն Թիֆլիզի :

Ի՞նչ է այս մեծ պատճառն որ Հայկ. Միութեան մէջ ի հանդէս եկած և անոր հիւանդութեանց ցնցումներուն գլխաւոր արտադրիչն եղած է :

Այդ պատճառին անունն է Հայկական մոլոլութիւնք, որք են երկպառակութիւն, նախանձ, քսութիւն, մատնութիւն և անբարատաւանութիւն : Երկարատեան կը մխիթարէի ես զիս ըսելով թէ ասոնք ամէն ազգի մէջ ալ կը գտնուին : Բայց վերջին ամաց փորձառութիւնս և դիտողութիւնքս համոզեցին զիս թէ արդարեւ մեր ազ-

գին մէջ աւելի շատ կը գտնուին, մեր քաղաքական հը պատակ վիճակ յատկապէս նպաստած լինելով այդ ատերու տարածման մեր մէջ :

Ես այժմ բարոյախօսել չեմ եկած այս նիւթոյ վերայ, այլ կը շտառնամ ըսելով թէ այս ատեր, որք շատ ճարակած են մեր ազգային բնաւորութեան մէջ, յոյժ ծանրը նշանակութիւն ունին և մեր ապագային քան զամենայն ահաւոր վտանգներն անոնցմէ կը ծնին այժմ և պիտի ծնին յետոյ : Ինչ որ Հ. Միութեան, այս փոքր ընկերութեան, մէջ պատահած է, նոյնն պատահած է ամէն Հայ ընկերութեանց մէջ, և բազում օգտակար ընկերութեանց տարածմամբ մահն այս ատերուն կը պարտուի :

Մեք հայքս կ'որոտամք Սուլթաններու դէմ, Մուսա Պէկերու դէմ, արտաքին թշնամեաց դէմ, բայց, աւագ, չեմք մտածեր թէ թշնամեաց քան զամենայն սարսափելին ունիմք ի մեզ «Հայ ունախանձն» որպէս կ'ըսէ «ՄՇԱԿ» : Այս նախանձն է որ կը խանգարէ կարգն, կը քակէ ընկերութիւնն, կը պառակտէ միութիւնն, կը կործանէ ազգն : Այն կործանեց յանցեալումս մեր ազգային իշխանութեան գահն, և կրնայ կործանել նոյնն յապագային : Մեր այս ազգային ատերն են որք այժմ՝ Վրականացուն են զմեզ, արգելք կը լինին մեր ուժերու կեդրոնացման, կը վիժեցունեն ազգօգուտ ձեռնարկներն և թոյլ չեն տար Հայկ. դասն աւելի ազդուապէս պաշտպանելու : Օ՛, Հայեր, գիտե՛ք, գիտե՛ք, թէ եւ Եւրոպեան և Ամերիկեան Մամուլն չդադարի Հայկ. ինքրոյն վերայ խօսելէ, թէ եւ Բաւլամէնթն ամէն նստի մէջ վիճի մեր վերայ, թէ եւ բոլոր քաղաքագէտք համակրութիւն յայտնեն մեր ազգտից համար, թէ եւ Եւրոպա վեհաժողով ընէ մեր խնդրոյն համար, թէ եւ բանալիք և նաւաւորմք պետութեանց միանան զմեզ փրկելու համար, չպիտի իրօք և տեւական կերպիւ ազատուիմք եթէ մեր ատերներուն գերին միամք : չպիտի կրնամք ազգային ինքնօրինութեան գահուն վերայ բազմիլ երկար՝ ցորչափ նախանքն ու քսութիւնն շարունակեն անոր հիմունքն սարսել : Ո՛հ յիսարուիք, թագն չէ որ զմարդ թագաւոր կ'ընէ, պարտ է ունենալ թագ կրելու արժանի գլուխ : Զանաւք իբրեւ ազգ, իբրեւ ցեղ, կրթուիլ և ազնուանալ, բարձր բռնել մեր գլուխ, բարձր՝ մեր սկզբանց դրօշ, մինչ թագ կամ ինքնօրինութիւն կը խնդրեմք Եւրոպայէն :

Անշուշտ բարի և առաքինի Հայեր շատ կան. և մեր Հայկ. Միութիւնն ալ այնպիսեաց կը պարտի իւր գոյութիւն և կեանք. բայց ստիպուած եմք խոստովանիլ թէ շատեր են վատերն : Եւ որ աւելի ցաւալի է այդ վատերու առջեւ ասպարէզն բաց կը թողուն բարի Հայերն : Այս շարաթ Հայ երիտասարդ մի պատմաց ինձ իւր մէկ փորձառութիւնն ինքն, ոստայնանկ, կը գործէր նիւ Եօքի մետաքսի գործարանի մի մէջ. օր մի թիւերն խառնուեցան : Ամերիկացի գործաւոր մի օգնեց մեր երիտասարդին, և այդ պահուն Հայ գործաւոր մի գաղտնիքն Սմերիկացիէն թոյլ տալ իրեն որ մկրատաւ կը տըրտէ թիւերն. ասոր դէմ կեցաւ Ամերիկացին և ապա բանն պատմեց Հայուն : Այդ երիտասարդ, իւր հայրենակցին թիւերն կտրտելու համար մկրատ առնող այդ երիտասարդ, Հայկ. Միութեան մէջ պաշտօն վարած, այլ և այլ ընկերութեանց անդամակցած, ազգասէր, հայրենասէր, անձնուէր երիտասարդ է... Կրնայի զբժքազգաբար այսպիսի բազմաթիւ օրինակներն այժմ յիշել քրտուններու, չարակամներու և եղբայրատեսակներու որք «մեծ հայրենասէր» կը կոչուին երբեմն բանգէս երեւցողներու անդամ չըլթուեցէն : Օ՛, ո՛հ, ո՛հ, Ո՞ճ, նախանձու զբրպարտիչ, վատ Հայն չկրնար ազգասէր լինիլ, Հայուն չարիք ընողն չկրնար սիրել զՀայաստան, ո՛չ կարէ քարն թռչիլ : Զիսարուիք եղբարք : Մեր մէջ Հայեր կան որք ազգասէր կը ձեւանան, հայրենասէր կը հռչակուին, կը խօսին, կը պօռնան, և սուկայն այնքան վատ են զի եթէ պէկութիւն ունենային

Մ ու ա Պ է կ ի լը լինէին, եթէ Հայաստանի կուսակալ կարգուէին, Վ ա ս ա կ ի լը լինէին, եթէ զօրավար լինէին Մ ե ռ ո ժ ա ն կ ի լը լինէին, եթէ քահանայ լինէին, Վ ե ս ա Ս ա ռ զ ի ս կ ի լը լինէին :

Ի՞նչպէս կրնայ ազգն ազատիլ այսպիսեաց ձեռքէն : Պօլսոյ մէջ յեղափոխական յանձնախումբ մի այսպիսեաց մի քանին սպաննեց : Միթէ վատ Հայերն կրնա՞նք ազնուացունել մի քանին սպաննելով : Ոճրագործական միջոցներով, տինամիթով և դադտ դաւադրութեամբք բարի փաստ մի յառաջ տանելու դէմ եմ ես : Եթէ վատ Հայ մի ձեռքս անցնի, անոր մէկ մազին փնտս չեմ ընել : Բա՛յց չեմ ընել դայն ինձ բարեկամ, չեմ կոչել դնա ազգասէր, չեմ տար նմա պաշտօն, չեմ ընդունիր դայն ընկերութեանս անդամ, եթէ անդամ է արդէն կ'արտաքսեմ՝ զնա, և բոլոր ուժով կ'աշխատեմ դուրս պահել զնա ազգային դործերու բոլոր շրջանակներէն, և կ'ըսեմ առ սրբիս Մերութանայ, «եւէք ի մէնջ, ի բաց գնայք, Անէժք ոյց չեն ճշմարիտ Հայք : Զի՞ կայք, ի մէնջ ի բաց ի բա՛ց գնայք» ի բա՛ց, ի բա՛ց . . . :

Եւ որպէս զի ազգին մէջէն պակսի նախանձն և մասունք նորին, պարտիմք բարոյական դաստիարակութեան հոգ տանիլ ի Հայ վարժարանս, և պարտիմք Մը՜ շ ա կ ի նման ազգ . բարոյախօսութեան յատուկ բաժին ունեցող թերթերն տարածել ազգին մէջ : Այս է հիմնական դարմանն :

Սիրելի ընկերք և ազնիւ հանդիսականք, ներեցէ՛ք երկարութեան բանիցս և դառնութեան բանիցս : Խոցուեցան ձեր սրտեր, թողէ՛ք զնեմ բալասան : Միթարուեցէ՛ք տեսնելով զՀայկական Միութիւնն հնգամեայ եղած, կենդանի, բարգաւաճ : Միթարուեցէ՛ք տեսնելով թէ Ազգին բարի մասն, թէ և նեղութեամբ, կը յաղթէ՛ չար մասին, և պիտի միշտ յաղթէ : Դիտեցէ՛ք մեր այս տունը՝ կըն օտար հողոյ վերայ տնկուած և արմատ բռնած : Հոտոտեցէ՛ք անոր ծաղկանց բուրումն . զովացէ՛ք անոր քաղցրիկ հովանոյն ներքեւ և գնացէ՛ք ըսել թէ Հայկ . Միութիւնն չորցած չէ՝ ո՛չ մեռած չէ այն Միութիւն որ կը շարժի, կը քալէ, կ'ընթանայ փշրելով ընդ ոտիւք խոչ և խափան, և կոխելով իւր թշնամեաց գլխոյն վերայ : Կեցցէ՛, կեցցէ՛, կեցցէ՛ Հայկական Միութիւնն յԱմերիկա :

Ն Ա Մ Ա Կ Կ . Պ Օ Լ Ս Է Ն

15 Ապրիլ 1891

Բարեկամ,

Անցեալ օր Բուրդ ցեղապետներն իրենց քաջութեան և զինուորական տաղանդին այնպիսի ապացոյց մը տուին որ բովանդակ քաղաքական աշխարհի մէջ պիտի հռչակուի :

Իտալական Դեսպանատան առաջին թարգման Պառոնի և իւր կին ձիով պտոյտի երթալու ատեն Կալաթա Սէրաի մօտ հանդիպեցան Մուսա Պէկի ցեղակիցներէն ու մանց : Բուրդ Պէկերն որ մի քանի շաբաթէ ի վեր կայսերական իքրա մօն եր ու մէջ գլխովին ընկղմած՝ անհամբեր էին ցուցնելու թէ արժանի են այդ իքրա մօն եր ու ն, յարձակեցան թարգմանին և Տիկին Պառոնի վրայ և ձիերէն վար ձգեցին զանոնք . Տիկինն նուազեալ և այրն թեթեւակի վիրաւորեալ վերցուեցան զեանէն :

Բուրդերն կը մտածէին թէ քանի որ Սուլթանն զիրենք հեռաւոր դաւառներէ հրաւիրած է Ստամպուլ, և կայսերական քէօքէն զիրենք դիտած է և առատ բարեւ, առատ փխլաֆի և ծխախոտի հետ օր ըստ օրէ տալ հրամայած է իւր կողմանէ, անշուշտ իրենց քով զօրութիւն մը կոյ, հարկաւ փառիշահը իրենց ձեռքով բան

մ'ընել կուզէ : Այդ բանն ալ գաղտնիք չէ մնացած . պալատն հասկցուցած է այս Պէկերուն, թուով 134, թէ Հայերն կ'ուզեն Բրդասդանի արեւ, ուստի և իրենց կայսերական զօրքի աստիճան կը տրուի որպէս զի երթան Հայոց վրայ հսկեն, անոնք կողոպտեն, կեղեքեն, զարնեն բա՛յց իս ո ռ ա մ ա ն կ ու թ ե ա մ ր :

Հասան Հիւսէին իրարու ըսին «խորամանկութեամբ անշուշտ, միթէ մենք չե՞նք հասկնար :» Եւ երբ իտալական թարգմանն ու Տիկինն տեսան ձիաւոր, ըսին «խորամանկութեամբ,» և գետին փռեցին զանոնք . . . : Այսպէս ցուցին Սուլթանին թէ որքան լաւ սովորած են դասն :

Ով խո՛ր խորամանկութեանս . . . : Մայրաքաղաքին մէջ, զինուորական կայանին քթին տակ, պահականոցին մօտիկ, կը յարձակին Եւրոպացոց վրայ, չկասկածելով թէ Եւրոպացի կեաւուռն Հայ կեաւուռն տարբեր է, թէ Պօլսան Մուշ չէ, և թէ կեաւուռն բանակներ կան յԵւրոպա որոց առջեւ Բուրդ հեծելազօրք փռի ալ չեն արժեր :

Այս դէպք շատ յստակ դասեր կը պարունակէ :

Տեսնենք Սուլթանն պիտի ըմբռնէ՞ իւր դասն-թէ բարբարոս ինչ ըսել է . թէ Բրդերն ձախող գործիք մ'են իւր ձեռաց մէջ, քանի որ անկարող են ի միտ առնուլ և գործադրելու արուած հրահանգներն ալապէս բայց միայն քրդաբար : Արդեօք իւր ցնորական յոյսեր ցնցուեցա՞ն թոթափեցա՞ն Բրդաց վրայէն :

Տեսնենք Եւրոպա ալ պիտի քիչ մ'աւելի հասկնա՞յ թէ Բուրդ ինչ ըսել է, թէ Հայերն, անգէն և անպաշտպան, ի՞նչեր կը կրեն այս կատաղի բարբարոսաց ձեռքէն ի գաւառս, ուր Թուրք կառավարիչք Եւրոպայէն ամաչելու պէտք չունենալով Բրդաց հետ կը բաժնեն աւարն և Հայերն ջարդելու պատին :

Տեսնենք Սուլթանն որո՞ւ պիտի բարկանայ քրդական ծեղագորաց այս ընտիր նմոյշներուն այս պատուական ցոյցին համար . . . :

Ո՛վ Աստուած, կայսերական մեծարանաց մէջ խեղդուող այս Պէկերուն էն անմեղն քանի՞ մարդ կողոպտած և քանի՞ անմեղի արիւն մտած է, դու միայն գիտես : ազատէ՛ մեր ազգն այս պատուհասէն, և ազատէ՛ զՍուլթանն իւր պատրանքէն :

Աներեւոյթն

Ն Ա Մ Ա Կ Կ Ի Լ Ի Կ Ի Ա Յ Է Ն

15 փետր 1891

(Այս նամակի միայն մի քանի մասերն աստ կը հմատարակեմք :)

Կը փութամ նկարագրել ձեզ Կիլիկիոյ, Ուլնիոյ, Կոկիսոնի, Հաճնոյ, Բայասի դաւառակաց բազմահալ քաջաբաց և գիւղօրէից քաջազուն բայց աղքատիկ Հայոց, Կ . Պօլսոյ գում-գաբուի դէպքէն ի վեր կրած աղէտներն, որոց որպէս ականատես եղայ ի մօտոյ և հաւաստեալ տեղեկութիւն ունիմ :

Կիլիկիոյ վերոյիշեալ տեղեաց կրօնական և աշխարհական նշանաւոր մարդիկ վերոյիշեալ դէպքէն ի վեր տեղական կառավարութեանց կասկածանաց ենթարկեալ են, և ի խոնաւ բանտս կը հեծեն ի Մարաշ, ի Սիս, ի Բայաս, և յԱտանա, և յաղթաբազուկ հրացանակիրք նոցին յանառիկ լերինս սպաստանեալ, ինքնապաշտպանութեամբ կ'ապրին գուրկ յամենաբաւական պաշարաց, որք և թէ

ունենային դրամ, ընդէ՞ր ցարդ չպիտի գործէին և յաղթութեամբ չպիտի իջնէին մինչև ի կիլիկեան նաւահանգիստն միջերկրականի:

Բանտարկելոց մէջ են Ա. Կարապետ Եպիսկոպոս Առաջնորդ և վանահայր Ուլնիոյ, մի վարդապետ մի քահանայ, երկու դասաստու, և բազում Հայ երեւելիք, և ի հասարակ ժողովրդոց Ուլնիոյ, կան նաեւ Հաճնոյ երեւելիներէն, և ի կրթական պաշտօնէից առաւել քան քահասուն մարդիկ. յԱտանա՝ մի վարդապետ և եօթն կրթական պաշտօնեայ, և ի Բերդին Բայասու՝ Հինգ երեւելիք Հայոց ի գիւղօրէիցն Բայասու...:

ՆԱՄԱԿ ԿԻԼԻԿԻԱՅԷՆ

«Հայք»ի յատուկ թղթակցէն

20 Ապրիլ 1891

Ձէյթունի Եպիսկոպոսն երկու երիցանց և իրր եօթանասուն Ձէյթունցոց հետ ի Մարաշ բանտարկութիւն կրած լինելէ յետոյ Այնթապ զրկուեցան և անտի ալ չգիտեմք ո՛ւր... Այս կողմերու չփոթութիւնն հետ զհետէ կ'աւելնայ, և ամէն Հայ արկածի երկիւղ կը կրէ: Երիտասարդութիւնն յօժար է անձնուիրութեան, ամենուն ազգային եռանդն անսովոր սաստկութեան հասած է, բայց միջոցներու չգոյութիւնն, առաջնորդներու բացակայութիւնն, կառավարական ծայրահեղ խստութիւնն կ'անդամալուծեն ամէն ջիւղ:

Մի լիցի թէ արաւսահամանի Հայերն հաւատան «անդորրութեան» կեղծ լուրերուն. մեր վիճակ անմիջապէս դարմանի կարօտ է, վասն զի վերջին յուզմանց ժամանակէն ի վեր նեղութիւնք հարիւրապատկուած են...
Կիլիկիացի

ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԻՏ Բ.

ԿԸ ԶԲՕՍՆՈՒ

Ծանօթ է թէ ամէն ուրբաթ Սուլթանն իւր Պալատին մօտ գտնուող մզկիթներէն մին կ'երթայ Սէլամ լըքի արարողութեան համար: Ապտ-իւլ-Համիտ երբեմն ձիով կ'երթայ, բայց աւելի յաճախ կառօք, ընկեր ունենալով Բլէվնայի փառաւոր պաշտպանողն, Ղազի Օսման Փաշան, պալատի մարտջախտն: Աղօթքն ընելէ և ներկայ զօրագնդոց հանդէսն տեսնելէ յետոյ փատիլահն ուղղակի յեւլտըզ Բէօշք կը վերադառնայ: Սուլթան Համիտի գահակալութենէն ի վեր այս այսպէս եղած է միշտ: Ի սկզբան անդ ցաւալի էր տպաւորութիւնն, քանզի Ապտ-իւլ-Համիտի անմիջական նախորդներն, Սուլթան Մէճիտ և Սուլթան Ազիզ, սովորութիւն ըրած էին, Սէլամլըքէն յետոյ, երկար պտոյտ մ'ընելու մայրաքաղաքին մէջ: Սուլթան Համիտ համոզուած է իւր անյաջող խորհրդատուներէն թէ ժողովրդեան երեւիլ վտանգաւոր կրնայ լինիլ իրեն:

Անցեալ ուրբաթ Սուլթանն շեղեցաւ իւր հաստատուն սովորութենէն՝ Սէլամ լըքէն յետոյ չվերադառնալով ուղղակի ի պալատ: Ղազի Օսման Փաշա ի մի քանի հեծելոց ընկերակցութեամբ, Սուլթանն զնաց ի Նիշանթաշ Օիլամուրի ճամբով: Վալիտէ Սուլթանին այցելեց, յետոյ հրամայեց Մեծ Եպարքոսին Փօնագն հանդիպիլ: Թիկնապահ մի յղուեցաւ Նորին Բարձրութեան՝ հրաւիրելու զնա գալ նստիլ Նորին Վեհափառու-

թեան քով: Անտի, զնացին ի Բեաղլու Խանէ, ուր, ինչպէս ամէն ուրբաթ, երբ օդն գեղեցիկ է, շատ մարդ կը գտնուի զբօսնելու համար:

Սուլթանին ժամանումն ի կայսերական քէօշկն Բեաղլու Խանէի ողջունեցաւ խանդազին կեցցէներով: Յորմէ հետէ կը բազմի Օսմանեան Գահուն վերայ, այս ռաջին անգամն լինելով Ապտ-իւլ-Համիտ կուգար ժողովրդեան քով, և Իսլամաց հանգստեան օրն տօնող խմբերու ազատ ուրախութեանց կը մասնակցէր Կ. Պօլսոյ յոյժ յաճախեալ զբօսավայրին մէջ:

Ասիկա անակնկալ մի շէր լուի, այլ կարեւոր դէպք մի: Այնպէս որ բազմութիւնն ժողովեցաւ փատիլահն շուրջն, որ կարի զգածուած և կարի երջանիկ իրեն համար նոր եղող այս զգացումներով, վերջին աստիճան շընորհալի քաղցրութիւն ցուցուց: Հրաւիրեց պարտողներն որ առանց քաշուելու զբօսնուն, որպէս թէ ինքն չլինէր անդ: Պահ մի յետոյ բարեսրտութեամբ ընդունեց գիւղացիներն որք եկան ընծայել նմա մածուն, և հրամայեց որ նոցա 300 լիրայ տրուի:

Սուլթանն հոն մնաց մինչև երեկոյ: Անդ ընթերց, և ժամ ութ էր երբ մեկնեցաւ Եւլտըզ Բէօշքի պալատըն վերադառնալու:

(Թան)

ՆԱՄԱԿ Կ. ՊՕԼՍՈՅ

ՀԱՅՐԵՆԵՍԻՄԻՆՆ

ՅԵՆՁՆԵՄԻՆՆ

Հետեւեալ նամակն թէ և հրատարակուելու որոշ մըտօք ուղղուած չէ մեզ, օգտակար կը համարիմք ծանօթացունել զայն բոլոր գաղթականաց, վասն զի Կեդրոնի մի հաստատման պէտքն խորապէս զգացող լուրջ մարմնէ մի կուգայ:

Կ. Պօլսոյ, 20 Ապրիլ

Մեծապատիւ Խմբագիր Տէր

«Հայք»ի ազգօգուտ լրագրոյ

Ամենայն ախորժանօք կարգացինք Ձեր Մեծապատութեան այն յօդուածն որ կը վերաբերէր ընդհանուր Կեդրոնական Միութեան Հայոց Գործիչներու:

Տարիէ մը ի վեր ի Տաճկաստան և յայլուր տարաբաղդ Ազգիս գլխէն անցած աղետալի արկածներն չէին կարող անտարբեր թողուլ և չմոռնալ այն սրտերն որոնք արդէն քիչ շատ ազգայնութեան ոգի կը կրէին և ըստ իւրեանց նուիրական պարտականութեանց առ այդ կը նկրտէին ձեռնամուխ լինիլ և զբաղիլ ու էր բարոյապար և նիւթական օժանդակութեամբ: Մանաւանդ վերջերս երբ ամենայն գործ տակն ու վրայ, ազգային իշխանութիւն չկար, Պատրիարքարանը փակեալ վիճակի մէջ. գաւառներն բարձի թող ի վիճակի ենթարկեալ, գործիչ համարեալ անձինք մասնիչներու և լրտեսներու դեր ստանձնած, բանտերը բազմաթիւ հայերով լցեալ. ժողովուրդն վերջին աստիճան յուսահատութեան մասնուած բարեսիրտ ազգայնոց մեծ մասը առհասարակ անճարարած, մէկ խօսքով ընդհանուր ազգն մեռելատիպ լուրջութեան մասնուած էր ի Տաճկաստան, ո՛չ թէ մեր նիւթական ու բարոյական կարողութեանց վատհասեալ, այլ մեր սրտին ցաւէն և ի չգոյէ լաւագունին և ի հարկէ ըստիպեալ և առ Աստուած ապաւինեալ կազմաւորեցինք մեր Միութիւնը: Եւ որովհետեւ, ինչպէս արդէն ըսինք անցեալին փորձը մեզ ուղեցոյց ունէինք, սկսանք ուրեմն ուշի ուշով և մանրամասն քննել թէ այդ ամէն ձախողութեանց ինչ պատճառներ կային. և յետ բազում խորհրդակցութեանց և զննութեանց վերահասու եղանք թէ գլխաւոր պատճառն էր զանազան կուսակցութեանց իրարմէ անջատ և շատ անգամ իրարու իսկ հակառակ գոր-

ծողութիւնն, նա մանաւանդ և այս խառնաշփոթութեանց մէջ գաղմաթիւ տկար, սգէտ և ռամիկ ժողովրդեան մէջ մի քանի բաղդախնդիր գործիչներու ազդասիրութեան պատրուակին տակ անխղճօրէն ժողովուրդը կեղեքելով խաբէլնին: Հետեւաբար այս ամէնն աչքի առջեւ ունենալով մտաբերեցինք որ այս անխղճութեան և անկերպարան վիճակին վերջ տրուի, և այս նպատակաւ իսկ և իսկ ընդարձակ տեղեկագրեր պատրաստելով յղեցինք առ Պատուարժան Խմբագրութիւնն Լ'Արմէնիի, Արմէնիաի, Հայաստանի և Հնչակի՝ խնդրելով և աղերսելով որ այս ամէն անտեղութեանց բարձման համար շնորհ ընեն գէթ ի շնորհս խղճալի ազգիս պահ մը ի բաց վանելով ամէն նկատումներ իրենց մէջ միանալով կազմակերպին Կեդր. Հայրենասիրաց Միութիւն, և զայս պատշաճապէս յայտարարելէ յետոյ նոցա հրահանգի համաձայն կազմակերպուի համայն Տակաստանի և օտար տէրութեանց շրջաններու մէջ իւրաքանչիւր քաղաքի մասնաճիւղը. որով ժողովուրդը խաբուելէ և կեղեքուելէ կազատի և թէ միեւնոյն ուղղութեամբ Կեդրոնէն հրահանգուելով և ամէն Մասնաճիւղեր, գործերը լաւ և ուղիղ կերպարան մը և վերջ մը կ'ստանան:

Մեր այս առաջարկին անմիջապէս պատասխանեց Մեծ. Պ. Մ. Զեբազ, յայտարարելով թէ ինքն ինչպէս ուրիշ անդամներ, նոյնպէս և այժմ պատրաստ է միանալու, կ'արտօնէ զմեզ որ ղեկուցանենք զայս միւս երեքին, որպէս զի իրենց կողմանէ եւս մէկմէկ պատուիրակներ ղրկեն ի Փարիզ, ուր ինքն անձամբ երթալով, միութեան խնդրոյն վերայ բանակցելով զարժանն անօրինէն և այլն: Զայս տեղեկութիւն անմիջապէս հաղորդեցինք իրենց հասցէին: Մի քանի օր վերջ Արմէնիաի Խմբագրութեանէն ստացանք մի յուշարար Ա. տառուոյ և մի կանոնագիր իւր Միութեան որով կը ծանուցանէր թէ յուշարարի 75 երեսէն սկսելով կարգանք: Այդ երեսներէն և նոյն միջոցին իր Արմէնիա ով բացատրած մտքէն սա հասկցանք թէ, թէեւ ինքն ժամանակին քանի քանի անգամներ Կեդր. Միութիւնը կազմաւորելու համար շատ ջանքեր ըրածէ, սակայն անյաջող մնալուն համար ստիպուած է իր շուրջը գտնուած ոյժերով կազմաւորել Հայ — Հայրենասիրական Միութիւնը, հետեւաբար անտեղի կը գտնէր ամէն նոր առաջարկի առջեւ տեղի տալով լուծել արդէն գտնուածը և նոր մը կազմակերպել: Աստի բաւական օրեր վերջը Հայաստանի Խմբագրութիւնը՝ որոյ հասցէին ուրիշ գաւառներէ եւս ճնշումներ տեղի ունեցած էր միութեան խնդրոյն համար ճարտահանալ այսպէս պատասխան մը կուտար իւր լրագրոյն միջոցաւ և անուղղակի ձեռով մեզ իմացունելով թէ, իրենք կանոնաւոր կերպով Հայրենասիրական Միութիւն մը կազմած էին արդէն և թէ ոգեւորութեամբ կ'աշխատէին Հայ Խնդրոյն և թէ ամէն ոք կարող էր բացարձակ վստահութիւն ունենալ այդ միութեան վերայ քանի որ նորա գը լուխը կը գտնուէին հարուստ և ազգեցիկ Անգղիացի Լորտեր, Երեսփոխաններ, Պաշտօնեաներ ևն: Վերջապէս Հնչակի Խմբագրութիւնն նոյնպէս անուղղակի կերպով կը ծանուցանէր թէ շատերէ բաղձացեալ այդ միութիւնը, անկարելի էր իրաբերօժել քանի որ չորսին ալ ուղղութիւնը և կարծիքը տարբեր էր ևն: Այդ. զայս ամենայն լսելով և կարգալով ձեռնակալ և անձարակ մնացինք բայց չյուսահատեցանք, զի ինչպէս պիտի բացատրեմք այժմ, խնդրոյն մէջ երկու կէտեր կային որ մեր ուղադրութենէն չվրիպեցան, այն է՝ կամ այդ Պարոնները թիւրիմացութեամբ չէին կարող ըմբռնել թէ Միութիւնը ինչ հիման վերայ պէտք է կայանայ և կտմ թէ բացարձակապէս ետութիւնն էր որ դժբաղդաբար հետի կը պահէր այդ մարմինները իրարմէ: Պարզենք ըսածնիս:

Ամէն անոնք որք քիչ շատ ազգաց վերածնութեան ընթերցմամբ և հետազոտութեամբ զբաղած են, կը տեսնեն անչուշտ թէ ամէն ատեն երբ ազգի մը մէջ յե-

ղափոխական գործերու ձեռնարկած են. ժողովրդեան խառն դասակարգէն սրտոտները զէն ի ձեռին յազպարէզ նետուած են. հարուստը իր ոսկիովը նպաստած է, քաղաքագէտն՝ դանազան տէրութեանց գթութեանը և խղճին դիմած է զանազան միջոցներով. բանաստեղծը կամ գրագէտը իր գրիչն նուիրած է ժողովրդեան եռանդը բորբոքելու և վառ պահելու. կրօնականը՝ մէկ ձեռքը խաչ առ բարձեալն և միւս ձեռքը սուր առ ժողովուրդըն, Գործի Սրբութիւնն և նուիրականութիւնն քարոզած և բացատրած է ի լուր ամենեցուն. վերջապէս ամէն ոք իր կարողութեամբը և բարեմասնութեամբը մասնակցած է այդ հանրային գործին. և եթէ երբէք եղած և պատահած է առիթներ՝ յորում խնդրոյն մէջ մի քանի գործիչներ տարբեր և անտեղի նկատումներով պառակտեալ և զիրար լքեալ իրարմէ անկախ գործելու ձեռնարկած են, հետեւանք ուրիշ բան չէ եղած բայց եթէ Հարաշար պարտութիւն և յուսահատութիւն: Մենք փոքր ի շատէ սիրող գոլով զանազան և նոյն իսկ Հայոց, Ռուսաց, Սերպաց, Յունաստանի, Պուլկարաց, Գարատաղացոց և այլոց ազգաց ապստամբական պատմութեանց ընթերցումով, այսպէս տեսանք և այսպէս համոզուեցանք: Եւ արդ ո՞վ կարող է ուրանալ «Արմէնիա»ի օգտակարութիւնը, որ ամէնէն առաջ կերպ կերպ անաանելի զոհողութեամբ հիմն դրաւ այդ լրագրին և հըրահրեց գործը և նովաւ սթափեցաւ ժողովուրդը յոսին կալով իր խոր և մեռելատիպ քունէն. ո՞վ կարող է անտես առնել «Հայաստան»ի գործունէութիւնն որ իր Փրանքօ — Հայ լրագրով բոլոր Եւրոպիոյ ուղադրութիւնը հըրաւիրեց մեր արդար դատին համար: Ո՞վ կարող է ուրանալ «Հնչակի» կազմակերպութեան և նորա ծառայութեան արդիւնքը, որ իրեններովն անբացատրելի ահ և սարսափ ազդեց ընդհանուր Տաճկաստանի և զարմանք հանուր Եւրոպիոյ: Վերջապէս ո՞վ կարող է ի մեզ հաստատել թէ Լ'Արմէնիի հազուադիւտ և նրբահայեացք հըրատարակութիւնը իրենց արդիւնքն և տպաւորութիւնքն չունեցան և չունին Եւրոպիոյ վերայ. քաւ լիցի, ամէնքն ալ ունեցան և ունին իրենց կարեւոր բաժինը. բայց եթէ տեսնուեցաւ խնդրոյն մէջ ծանր ձախողումներ, սխալներ, անյարմարութիւն դիպաց և ժամանակի, տկարութիւն, անյաջողութիւն և այլն և այլն, այդ ամէնքն՝ ոչ թէ ուղղութեանց և կարծիքներու տարբերութեան էն և համոզումէ յառաջ եկած էին, այլ որովհետեւ զանազան նկատումներով և պառակտեալ և իրարու դէմ գործեցին ընդհանրապէս և նորա համար ցաւօք սրտի տեսանք որ դժուարութեանց և անյաջողութեանց մատնուեցաւ գործը և պիտի շարունակէ մնալ այնպէս քանի շարունակութեան մէջ մնան նկատումներն: Եւ ինչո՞ւ այնքան հեռիները դեգերիլ. մենք որ չորս հինգ ամսէ ի վեր այստեղ ձեռնարկած ենք ընդհանուր միութիւնը գոյացունելու բառնալով և հաշտեցնելով ամէն կուսակցութեան պետերը, ցաւօք սրտի կը խոստովանիմք որ դեռ կատարելապէս չենք յաջողած. պատճառ, որովհետեւ իւրաքանչիւր կուսակցութիւնը կը պահանջէր իրենին հետեւինք...

Եւ որպէս զի այս խնդիր վերջնականապէս լուծում մ'ստանայ, աստանօր մեր խոնարհ կարծիքն կը փութամք պարզել, սպասելով յամենուստ բաղձացեալ այս կազմակերպելի Կեդր. Միութեան համար Զեր որոշումն և տեսութիւնը բացատրէք ի պարտ ու պատշաճ տրնօրինութիւն: Մեզ համար՝ ինչպէս վերեւ յիշեցինք, ազգիս վերածնութեան գործը կարող եմք նմանցնել նաւու մը. որոյ արթուն նուապետին հրամանին տակ պիտի ուղղէ ղեկավարն զնաւն, նաւաստիք կազմ ու պատրաստ առաջին նշանին կայմերուն վերայ և յամենայն տեղիս ամենայն հնազանդութեամբ իւրաքանչիւրն իւր պաշտօնին և եթէ բազմին բերմամբ յաջող հովի մ'ալ հանգիպի, տարակոյս չկայ որ իր յուսացած օրէն առաջ պիտի հասնի ի նաւահանգիստն. իսկ եթէ հով չըլլայ, այն ա-

տեն մի քանի օր ուշ և եթէ հակառակ քամի և փոթորիկ լինի, բնական բան է որ ամենայն աշաղթութեամբ կազմակերպեալ այդ նաւն եթէ չյաջողի իսկ իւր սրտեալ նաւահանգիստն հասնիլ, գէթ կը կարողանայ նաւը իր մէջիններով վտանգէ և ընկղմելէ ազատելով մօտակայ նաւահանգիստ մը ապաստանել մինչև որ փոթորիկն անցնի և հովերն յաջողին. այսպէս ալ քանի որ այժմ մենք այդ նաւուն մէջ նստած կրնամք համարուիլ, մեր կարծիքով Լ'արմէնիի և Հայաստանի միացեալ գործողութեանց կրնամք վստահիլ հաղմացոյցի՝ այսինքն ազգային խնդրոյն քաղաքական մասն իսկ զեկամարաց՝ այն է յեղափոխական մասը Արմէնիի և Հնչակի միացեալ գործողութեանց և այս չորսին միացեալ աջալըծութենէն կարող եմք յուսալ մեր նաւին օր առաջ գէպի նաւահանգիստ ժամանումն. այլապէս ոչ: Բայց եթէ դժբաղդարար այս անգամ եւս անկարելի լինի դոցա համերաշխութիւնն և միացումն այն ատեն մեզ կը մնայ կամ ատոնց մէջէն և կամ դրոշն փնտռել մեզ համար վարպետ և կարող նաւապետ մը. թէ և այս կերպ քիչ չստ պիտի ուշանանք բայց աւելի լաւ է ինչպէս կ'ըսէ առածը, լաւ է անագան քան երբէք:

Մնամք ամենայն յարգանք

Ի Դիմաց Հ. Մ. Պ. Մ.

11,000

ՀԱՅ ՀԱՅՐԵՆԵԱՒԻՐԸ ՅԱՆՁՆԵՒՈՒՄԻ Ի ՆԻՒ ԵՕՐԻ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի 4 ԱՊՐԻԼԻ 1891

ՆՊԱՏԱԿ

«Յանձնախումբն» պիտի աշխատի վասն հաստատման կեդրոնական Յանձնախմբի մի յԵւրոպա, որոյ պաշտօնն պիտի լինի կազմակերպել և վարել Հայոց հայրենասիրական ջանքերն ի բարւոք լուծումն Հայկական Խնդրոյն:»

Այս Յանձնախումբը գաղթային կազմակերպութեան ծրագիրն իւր Մայիս 7ի նստին մէջ յետ երկրորդ ընթերցման քուէարկելով, որոշեց զայն յղել Հայ Գաղթականութեանց, հանդերձ չըջարեալական նամակաւ մի որով կը հրուիրէ ծրագիրն քննել և պատրաստուիլ տիեզերական ընտրութեան առւեր: Նոյն թուին Յանձնախումբն չըջարեալական նամակ և ծրագրի պատճէն իւր յատուկ կնքով կնքեալ յղեց հետեւեալ երկիրներն —

Անգղիա — Լօնտրա և Մանչեսթըր.

Ֆրանսա — Փարիզ և Մարսիլիա.

Պուլիարիա — Ռուսչուք, Հասքովօ և Գարապոնար.

Ռումանիա — Պուրէշ, Ֆոքշան և Քէօսէնի.

Թուրքիա — Կ. Պօլիս.

Եգիպտոս — Գահիրէ և Աղէքսանդրիա.

Ռուսիա — Ս. Փէթերբուրգ, Թիֆլիզ, Մօսքուա և Վաղարշապատ.

Պարսկաստան — Թէհրան և Դամպէթ.

Հնդկաստան — Կալկաթա, Տաքքա, Միրզապուր, Նարայնական և Տաիլինկ.

Պիրմանիա — Ռանկուն.

Պաթալիա — Ճավա.

Վերոյիշեալ տեղերն ուղղակի յղելէ զատ, բազմաթիւ օրինակներ ևս յղեց կեդրոններու մէջ քաջածանօթ հայրենակցաց ոմանց, խնդրելով որ այս ցուցակէն դուրս մնացած գաղթականութեանց եւս հասցունեն զայնքս՝ յարմար անձանց հասցէին ուղղելով: Յանձնախումբն կը յուսայ թէ «Հայք»ի միջոցաւ եւս այս ամենն հրատարակելով միջոց մ'եւս ձեռք առած կը լինի իւր հրաւերին տալ բոլոր բաղձալի հրատարակութիւնն.

Յանձնախումբն Ամերիկայի հետեւեալ քաղաքներն եւս ուղղեց իւր հրաւեր — Պոսթոն, Ուսթըր, Ֆիլադելֆիա, Փրովիտէնս, Հարթֆորտ, Ս. Լուի, Ֆրէզնօ, Թըրոյ, Նորթֆիլտ, Աթթլպորո, Ուոշինկթըն, Նաշուա, Սփրինկֆիլտ, Ուիլերմսթաուն, Նիւ Հէյվըն, Միննիապոլիս, Շիքագօ, Տէթրոիտ, Ռօլի, Պէրլինկթըն, Էլմիրա, Բամպրիճ, Լինն, Ս. Օկլիսթէն, Աթլանթիս, Փաթերսըն:

ԾՐԵՒԻՐ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆՑ

ՏԵՂԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ

ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆՑ

Յօդուած Ա. — Ամէն գաղթականութիւն, թուով փոքր կամ ստուար, պարտի ունենալ Հայրենասիրական Յանձնախումբ մի որ կեդրոնական մարմին մի կազմելու համար կատարուող ջանքերուն ոյժ տայ և ապա կեդրոնական գործոց տեղական մասնակցութեամբ զբաղի:

Կ Ե Դ Ր Ո Ն Ա Կ Ա Ն Յ Ա Ն Ձ Ն Ա խ Ո Ւ Մ Բ

Հ Ա Յ Ո Ց

Յօդ. Բ. Հայոց կեդրոնական Յանձնախումբն պաշտօնն պիտի ունենայ միութեան կապ հաստատել գաղթականութեանց մէջ, և կազմակերպել ու վարել ազգային հայրենասիրական ջանքերն ի բարւոք լուծումն Հայկական Խնդրոյն:

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ

Յօդ. Գ. Հայոց կեդրոնական Յանձնախումբի անդամք պիտի ընտրուին Հայ Գաղթականութեանց քուէարկութեամբ, որում պիտի մասնակցին Եւրոպայի, Եգիպտոսի, Հնդկաստանի, Ամերիկայի, Պարսկաստանի, Ովկիանիոյ և եթէ կարելի լինի Ռուսիոյ եւս՝ Հայք: Ամէն մէկ քաղաքի գաղթականութիւն, թէեւ մի քանի Հայերէ մի այն բաղկանայ, պիտի կրնայ կանոնաւոր ժողովոյ մէջ և ծանուցուելիք շարժումն քուէարկութիւն կատարել տալըն ընտրելիներու վերայ, զորս ըստ իւր համոզմանց պիտի նշանակէ, և քուէարկութեան արդիւնքն պաշտօնապէս պիտի հաղորդէ նիւ Եօրքի Հայ Հայրենասիրաց Յանձնախմբին, որ ուրիշ ամէն կողմէ եկած քուէներն եւս ի հաշիւ առնելով պիտի գտնէ թէ ընտրելեաց իւրաքանչիւրն որքան քուէ չահած է, և թէ ով են քան զամենայն աւելի շահող առաջին երեքն: Նիւ Եօրքի Յանձնախումբն, ի վստահութիւն ամենեցուն պիտի հրատարակէ ամէն մէկ գաղթականութեան կողմանէ իրեն հաղորդուած ընտրելեաց անուանքն և քուէներն, և առաջին երեքին պիտի ծանուցանէ իրենց ընտրութիւնն իրեւ անգամ Տիեզերական Յանձնախմբին:

ՇՐՋԱՆ ՊԱՇՏՏՈՆԱՎԱՐՈՒԹԵԱՆ

Յօդ. Դ. Կեդրոնական Յանձնախումբն անդամոց պաշտօնն պիտի տեսէ երկու տարի, բայց պիտի կրնան վերընտրելի լինիլ:

ԹՈՇԱԿ

Յօդ. Ե. Կեդրոնական Յանձնախումբի իւրաքանչիւր անդամն 1500 թալէն կամ 7500 ֆրանքի տարեկան թոշակ պիտի ընդունի, և իւր բոլոր ժամանակ պիտի

նուիրէ իւր պաշտօնի պարտականութեանց: Անդամք պիտի բնակին միեւնոյն քաղաքի մէջ:

ԵԿԱՄՈՒՏ

Յօդ. 2. Յանձնախումբն պիտի ունենայ Հայոց Կեդրոնական Սնտուկ մի, ուր պիտի մտնեն ազգային տուրքերն և ազգային ու օտար նուիրատուութիւնք: Ամէն Հայ որ Կեդրոնական Յանձնախումբի ընտրութեան համար քուէարկել ուզէ՝ պարտի կանխիկ վճարել մէկ թաւեռ կամ հինգ ֆռանք որ է իւր ազգային տարեկան տուրքն, և որ յետոյ տեղական Յանձնախումբին ձեռքով պիտի յղուի Կեդրոնական Սնտուկին:

Կեդրոնական Յանձնախումբն չպիտի կրնայ իւր քով պահել առուել քան հարիւր ոսկի. և մնացեալ գումարն Անգղիական դրամատան մէջ աւանդ պիտի դրուի:

ԱՐԱՐՔ

Յօդ. 3. Կեդրոնական Յանձնախումբն, իրեւ իւր րիկ Ազգային Ժողով, ամէն ինչ կանոնաւոր վիճաբանութեան յետոյ կանոնաւոր քուէարկութեամբ պիտի որոշէ, և ամէն անգամ քուէից մեծամասնութիւնն պիտի յարգէ:

Յանձնախումբն պիտի կրնայ, եթէ յարմար վարկանի, Ֆռանսերէն, Անգլիերէն և Հայերէն լեզուութեթ մի կամ թերթեր հրատարակել: Իւրաքանչիւր թերթի համար խմբագիր պիտի որոշեն իրենք իրենցմէ մին, բայց ամէն մէկ թերթի անօրինութիւնն պիտի գրաւուի ամբողջ Յանձնախումբին ձեռքն: Թերթերու նիւթական չափն կամ քննադատ Տիեզերական Սնտուկին հաշուոյն պիտի անցնի:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Յօդ. 4. Հայոց Կեդրոնական Յանձնախումբն իւր գործոց և ծախսոց սեղեկագիրն պիտի ներկայացունէ ընդհանուր Ժողովոյ մի, որ տարին մի անգամ պիտի գումարուի:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Յօդ. 5. Ընդհանուր Ժողովն պիտի բաղկանայ գաղթականութեանց կողմանէ առաքեալ պատուիրակներէ կամ ներկայացուցիչներէ:

Կ. Յանձն. ինքնարութեան և ազգային տրոց մասնակցող Հայերն միայն իրաւունք պիտի ունենան պատուիրակ յղել ընդհանուր Ժողովոյն:

Առ նուազն յիսուն քուէարկու և տուրք վճարող Հայեր պէտք են մէկ պատուիրակ յղել կարենալու համար: Այս նպատակու կրնան փոքրիկ գաղթականութիւններ ի միասին դալով օրինաւոր քուէարկուաց օրինական թիւն ամբողջացնել և պատուիրակ մ'անուանել:

Եթէ գաղթականութիւն մի օրինաւոր քուէարկուաց կարի ստուար թիւ մի կը պարունակէ, ամէն յիսուն քուէարկուի համար կրնայ մէկ պատուիրակ անուանել եթէ ուզէ:

Պատուիրակաց ճանապարհի ծախքն զայն յղովնորըն պիտի հոգան ազգային տուրքէն զատ լինելով:

Ընդհանուր Ժողովն իրաւունք պիտի ունենայ քուէարկութեամբ պաշտօնանկ ընել Կ. Յանձնախումբին յանձնարար անդամներն և անոնց տեղ նոր ընտրութիւններ կատարել տալ:

ՊԱՏՃԷՆ

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԻՆ

Մեծ. Հայրենակից

Հայրենեաց Սուրբ գործոյն մէջ յիշատակելի և ազգեցիկ դեր մի կատարելու կոչուած է Հայ Գաղթական աշխարհն, և սակայն ցարդ եղած ջանքեր արժանաւոր արդիւնքն չեն կրցած ընծայել առ ի չգոյէ այնպիսի կազմակերպեալ կեդրոնի մի, որ անջատ ուժերն միացունէ և իրարմէ անկախաբար կատարուող շարժումներն ի ներդաշնակութիւն բերէ:

Կրկին և կրկին փորձեր և խնդիրներ եղան այժմու Հայրենասիրական յանձնախումբոց կամ ընկերութեանց մէջ միութեան կապ հաստատելու կամ զայնս ի մի կեդրոնական մարմին ձուլելու, այլ անյաջող մնացին, վասն զի այդ յանձնախումբոց ոմանք այլ և այլ պատճառանօք մերժեցին միանալու առաջարկն:

Կեդրոնի մի հաստատման անհրաժեշտութիւնն առ հասարակ ընդունած լինելով հանդերձ՝ Ժողովուրդն դժբաղդաբար անգիտակից կը թուի դեռ իւր ուժոյն և չմտածել թէ ինքն կարող է այս գաղափար իրացունել իւր քուէից զօրութեամբ: Բաւական է որ ուժերն միացունելու գաղափարին նպաստաւոր գտնուող Գաղթականութիւնք ամէն ուրեք քուէարկութեամբ ընտրեն կեդրոնին անդամներն. յայնժամ դժուարութիւնք և դժկամակութիւնք կը փարատին:

Ընտրութիւններն կատարելէ առաջ հարկ է որ քուէարկութեան մասնակցելու արամադիր գտնուող մեր Հայրենակիցք հասկացողութիւն մ'ունենան կեդրոնին ընտրութեան եղանակին, պաշտօնավարութեան տեսչութեան և այլ հանգամանաց մասին, ուստի և Յանձնախումբս ներփակ ծրագիրն կը մատուցանէ իւրաքանչիւր գաղթականութեան որպէս զի նախապատրաստական գումարման մէջ քննելով անոր ամէն մէկ յօդուածն, և եթէ պէտք տեսնեն բարեփոխելով, յղեն մեզ: Յանձնախումբս գաղթականութեանց կողմանէ գալու դիտողութիւններն ի նկատ առնելով՝ պիտի բարեփոխէ ծրագիրն, և վերստին պիտի յղէ զայն առ գաղթականս:

Արդեօք ձեզ յարմար կը թուի՞ 1891 տարուոյ Հոկտեմբեր ամսոյն առաջին եօթնեակն, ընդհանուր քուէարկութեան համար՝ վասն ընտրութեան կեդրոնի անգամաց:

Կը խնդրեմք Մեծ. Հայրենակիցք, որ այդ քաղաքի մէջ Յանձնախումբ մի կազմէք, եթէ չկայ արդէն յարմար Յանձնախումբ մի, և ձեր գաղթականութիւնն ի Ժողով հրաւիրելով՝ քննութեան և քուէարկութեան ենթարկէք ներփակ Ծրագիրն, և կեդրոնի մի կազմակերպութեան կենսական խնդրոյն վերայ անոնց խորհուրդն և ծրագիրն մասին՝ դիտողութիւններ մեզ պաշտօնապէս և անյապաղ հաղորդելու շնորհ ընէք:

Ի դիմաց ՀԱՅ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱՑ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻՆ Ի ՆԻՒ ԵՕՐԲ՝ 7 Մայիս, 1891:

Ատենադպիր

Յ. Կ. Հիւրմիւղ

Ատենապետ

Գ. Գասպարեան

202 w. 23 rd St.

NEW YORK

U. S. A.

(Կնիք Յանձնախումբին)

ՀԱՅ ԵՐԻՏԱՍՍՐԴԱՅ ՓԻՔՆԻՔ

Տեղեկութիւն կը տրուի մեզ թէ նիւ Եօրքի Հայ երիտասարդաց Քր. Ընկերակցութեան նախաձեռնութեամբ Յանձնախումբ մի կազմուած է, որ Հայոց մօտաւոր դրօշապատուին պատրաստութեամբ կը զբաղի: Զբօսանքն տեղի պիտի ունենայ Մայիս 30ին, որ Ամերիկայի պաշտօնական տօնի օրերէն մին լինելով բոլոր գործաւորք կը դառնայ: Զբօսավայր ընտրուած է Լիպրթի կղզին: Իւրաքանչիւր ոք պիտի վճարէ 30 սենթ: Քաղքէն դուրս մաքուր օդ ծծելու, և խնամով պատրաստուած կերակուրներ ուտելու և ամէն կերպով զուարճալի օր մ'անցունելու այս գեղեցիկ պատեհութենէն չուսամք բազում Հայեր պիտի փութան օգտիլ:

Մտից տոմսի և այլ տեղեկութեանց համար դիմել առ Պ. Զամալեան, 296 վեցերորդ Էվլընիւ:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Լ'Առմէնիէն կը տեղեկանամք թէ Կ. Պօլսոյ Հայ Տիկնայք յոյժ շնորհաւորելի կերպիւ գործածած են կնոջ պաշտպանողական և յարձակողական զէնքն այն է ասեղն, ի պաշտպանութիւն Հայ դատին, պատրաստելով սքանչելի ասեղնագործութեամբ սեղանի պատառ մի Տիկն ՊՐԱՅՍԻ ի նուէր և ուրիշ ոսկեթել ծածկոց մ'ալ ի նուէր Տիկն ԿԼԱՍՍԹԸՆԻ:

Այն Տիկնայք որք գիտցած են մեր օտարազգի համակրողաց հզօր պարագլխոց Ազնիւ կենակիցներուն ընել այնպիսի սխրալի նուէր ձեռագործ, ո՞րպիսի զգացմամբ և սրտասարսի աւելնով, ո՞րքան Հայրենասիրական երգերով պիտի աշխատին յօրինել դրօշներ երբ Հայ երիտասարդք պատրաստ գտնուին զէն և դրօշ կրելու ի փրկութիւն նահատակող Հայրենեաց:

— Տր. Ա. Այվազեան «Ն. Եօրք Քառնթի Մէտիքլ էս ոօլիէշըն» կոչուած բժշկական ընկերութեան անդամ հռչակուած է վերջին նստին մէջ:

— Հայկ. Միութեան ժողովարահն եղող «Իսթըրն Սթար Հօլ»ին համար նոր վաճակալ կը փնտռուի, և մինչեւ որ գտնուի, Միութիւնն չպիտի կրնայ անդ նիստ ընել: Երբ նիստ ընելու համար պատրաստութիւնք կատարուին, յատուկ հրաւեր պիտի ուղղուի անդամոց:

Ա Ր Ա Ք Ս

ՊՍԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԵՍ ՎԵՑԱՄՍԵԱՅ

Իւրաքանչիւր թիւ իբր 200 երեսներէ բաղկացեալ Տարեկան բաժանորդագրինն է 3 ուրբի (իբր 2 թաւեր 40 սէնթ) Հասցէն է

Simeon Goulamirantz. Rue Stremiannaja. M. No. 1
Log No. 15 St. PETERSBOURG. (RUSSIE.)

Բ Ա Չ Մ Ա Վ Է Պ

Հ Ա Ն Դ Ի Ս Ս Ր Ա Ն

ԱՄՍՍԹԵՐԹ

Տարեկան բաժանորդագրինն է 10 Փռանք Հասցէն է
Redaction de la Revue "Basmavep" St. Lazare,
VENISE. (ITALIE.)

Հ Ա Ն Դ Ե Ս Ա Մ Ս Օ Ր Ե Ա Յ

Տարեկան բաժանորդագրինն է 10 Փռանք. վեցամսեայ՝ 6 Փռանք Հասցէն է

Redaction de la Revue Hantess" Au Convent des
R R. P. P. Mechitharistes. VII, Mechitharistengasse., 4
VIENNE. (AUTRICHE.)

Բ Ա Ռ Գ Ի Ր Ք Գ Ա Ղ Ղ Ի Ե Ր Է Ն - Հ Ա Յ Ե Ր Է Ն

Ա Ր Ո Ի Ե Ս Տ Ի Ց Ե Ի Գ Ի Տ Ո Ի Թ Ե Ա Ն Ց

Ե Ի

Գ Ե Ղ Ե Ց Ի Կ Գ Պ Ր Ո Ի Թ Ե Ա Ն Ց

Ե Ր Կ Ո Ի Հ Ա Տ Ո Ր

Պ Ա Տ Կ Ե Ր Ա Չ Ա Ր Դ Տ Պ Ա Գ Ր Ո Ի Թ Ի Ի Ն

Ընտիր թղթի վրայ, մերձաւորապէս 1300 ձևերով, մեծադիր քառաձալ, մօտ 300 թերթերէ բաղկացեալ: Ի վերջ երկրորդ Հատորին՝ յաւելուած Հայերէն—Գաղղիերէն Բառագրոց:

ԳԼՈՒԽ ԳՈՐԾՈՑ

Հ. Մ Ա Ն Ո Ի Է Լ Վ Ա Ր Դ Ա Պ Ե Տ Ի Ք Ա Չ Ռ Ի Ն Ի Ո Յ
Լոյս տեսած է Առաջին Հատորն, 150 թերթ, 627 գեղեցիկ ձևերով: Բացուած է բաժանորդագրութիւն երկու Հատորին ի միասին:

ՊՍՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Ա. Կանխիկ վճարումն բաժանորդագրեց երկու Հատորին ի միասին:

Բ. Բաժանորդագրինն է Փր. 50 (20 ուրբի):

Գ. Բաժանորդագրութիւն կը շարունակուի մինչ ցվերջ 1891 տարւոյս:

Դ. Բաժանորդագրութեան պայմանաժամն աւարտելէ յետոյ՝ գինը պիտի բարձրանայ:

Ե. Բաժանորդագրուողք պիտի ընդունին անդորրագիր ի վարչութենէ Տպագրատան՝ դրամոյ ստացման մասին:

Զ. Բաժանորդագրուողք պիտի ընդունին Առաջին Հատորն անդորրագրին հետ ի միասին. իսկ երկրորդ Հատորն՝ այն ինչ տպագրութիւնն աւարտի:

«Հայք»ի իմբազրատունն, յատուկ հրաւիրմամբ վեներաբոյ Միթիթարեանց Տպարանաւանին, Բաժանորդագրութիւններ կ'ընդունի Հ. Քաջունայն բառարանին և Հ. Ալիշանի դրքերուն համար, ինչպէս նաև «ԲԱԶՄԱ ՎԷՊ» Հանդիսարանին համար:

ED. LEGOLL, PHARMACIST,

Successor to W. CASWELL,

Pharmacie Francaise,

286 SEVENTH AVE., BET 26 TH & 27 TH STS., N. Y.

ESTABLISHED 1846.

Դեղագրիւր կը պատրաստուին խնամով

PHARMACIE FRANCAISE,

NORBERT FRANCK.

311 7th AVENUE,

NEW YORK.

Դեղատեղի և պատրաստուին խնամով

LANTELME'S

HOTEL & RESTAURANT,

40 UNION SQUARE

NEW YORK CITY

16 և 17 րդ փողոցներու միջև արեւելեան կողմն:

—Ընտիր Դաղղիական ինհարարութիւն—

Նախաճաշ 40 և 50, 75 սէնթ

Տ Պ Ա Գ Ր Ո Ի Թ Ի Ի Ն

Մ. Ս. Գ Ա Բ Ր Ի Ի Ի Ի Ն